Արձանագրություն N 4

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32 ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի

15.05. 2019թ.
Ժամ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Համբարձումյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մովսեսյան (ԳԱ), Ա. Գասպարյան (ԳԱ)
Գ. Սաֆարյան (ԲԱ), Ա. Տեր-Թորոսյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

I. **<u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>**
(Ա. Համբարձումյան)

1.1 Ընդունել ի գիտություն որ.

1.2 Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.3 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սահմանված ժամկետում ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի **«Լիլանարմ» ՍՊԸ** -ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չի համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին: **«Լիլանարմ» ՍՊԸ** -ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի **2196664/երկու միլիոն հարյուր իննսունվեց հազար վեց հարյուր վաթսունչորս/** ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետի՝ որոշեց մերժել «Լիլանարմ» ՍՊԸ -ի հայտը,

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**1. <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/32 >> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին մասին**

---

(Ա. Համբարձումյան)

2.1 Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով

1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Ագարակ» ԲԲԸ -ն:

4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Օրիոն-7» ՍՊԸ -ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

**5. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին**

---

(Ա. Համբարձումյան)

Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

5.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**6. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Համբարձումյան)

6.1 -ին տեղ զբաղեցրած Մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտից հարցումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

**Հանձնաժողովի.**

**Նախագահ՝** Ա. Համբարձումյան

**Անդամներ՝** Ա. Տեր-Թորոսյան

Ա. Գասպարյան

Գ. Սաֆարյան

Ա. Մովսեսյան

**Քարտուղար՝** Գ. Հուրյան